

ՇՐՋԱՆԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Շրջանագծի երկարություն հաշվելը շատ պարզ խնդիր է, եթե տրված է նրա շառավիղը: Իսկ ինչ կարելի անել, եթե այն տրված չէ:

Հարթության մեջ տրված են երեք կետերի կոորդինատներ, որոնք չեն գտնվում մի ուղղի վրա:

Ձեր խնդիրն է հաշվել այն շրջանագծի երկարությունը, որն անցնում է տրված երեք կետերով:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված են $x_1, y_1, x_2, y_2, x_3, y_3$ իրական թվերը, որոնք իրենցից ներկայացնում են նույն ուղղի վրա չգտնվող երեք կետերի կոորդինատներ:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել որոնելի շրջանագծի երկարությունը 0.01 մոտավորությամբ:

Օրինակներ

N°	stdin	stdout
1	0.0 -0.5 0.5 0.0 0.0 0.5	3.14
2	0.0 -500000.0 500000.0 0.0 0.0 500000.0	3141592.65